



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 14 » սեպտեմբերի 2022 թ.

№ 2/5690-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ԳՈՒ ԲԵԳԻՆՅԱՆԻ ԵՎ ԳՐԻՇԱ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 55/2022 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության Շիրակի տարածաշրջանային բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Գոռ Աշոտի Բեգինյանի և նույն բաժնի Բավրայի բաժանմունքի մաքսային տեսուչ Գրիշա Հարությունի Ավետիքյանի նկատմամբ կիրառել «Նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:



Recoverable Signature

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՅԱՆ

